

«Արցախբանկ» ՓԲԸ
Խորհրդի նախագահ
պրն Ա. Սելվեֆյանին

Եզրակացություն

ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ ԿԲ Խորհրդի 10 հուլիսի 2007 թվականի N 205-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումների» 1.16 կետի պահանջները՝ «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտը Ձեզ է ներկայացնում ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» համապատասխանության վերաբերյալ սույն եզրակացությունը:

Հաշվի առնելով այս և նախորդ տարիների ընթացքում Ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքները, մասնավորապես՝ ուսումնասիրված ներքին իրավական ակտերը, վերստուգված գործարքները և բանկի ընդհանուր գործունեությունը, կարծում ենք բանկի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ ապահովում է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով» սահմանված ներքին հսկողության հիմնական նպատակների իրականացումը:

Ներքին աուդիտի ղեկավար



Կ. Ասրյան

27.04.2018թ.